

նոցայ զրուցեց և ասաց թէ ո՞ղջ էք, այ-
սինքն աղէկ էք մի լա՛ն էք մի. և նոցայ
ճանաչեցին և ինչպացին. կալան գոտս
նորայ և երկիր պագին. և այն արն Զատ-
կին ի լեառն գալիլեայ երևեցաւ առաքե-
լոցն, և ի հետ նոցայ զրուցեց և ասաց.
Կնացէք այսուհետև մկրտեցէք զամենայն
հեթանոսս: Եւ բանի անգամ յետ յարու-
թեանն ի ծովեզերն երևեցաւ, և նորա-
ստեղծ ձուկն ի կրակին խորովեալ կերան:
Եւ ի վերնատունն դրաւքն փակելուաւքն
հոտու և երևեցաւ, ողջոյն ևս նոցայ և
ասաց. Մի երկնչիք ես եմ, էւ իմաւուսայ
ճանապարհին ի հետ կղևոսեանցն գնաց և
զրուցեց, և զհացն ի հետ նոցա բեկեաց:
Եւ հայրն Աբրահամ և մեծատունն և աղ-
բատ Ղազարն զմիմեանս տեսին և ճա-
նաչեցին և հետ միմեանց զրուցեցին: Ով
որ որ ասէ թէ յարութիւն չկայ կամ զրու-
ցել չկայ, անթողի մեղք և չարիք է,
հեթուածող է և նզոված: Երբ զրուց չկայ
նայ՝ որով տի արհնեմք զԱստուած և
զովն և զոհանան, զի գրեալ է. թէ ան-
տէնին արն ի հրեշտակաց հետ պիտի
արհնեն զԱստուած և զովն և զոհանան:
Եւ մեծ մարգարէն լսայի ասէ. Յարիցեն
մեռեալք, կենդանացին ամենեքեան որք
եղեալ են ի գերեզմանի: Զարթիցեն ցըն-

ծասցեն և ուրախ եղիցին դադարեալք
երկրի: Եւ Եզեկիլէ մարգարէն ասէ. կցե-
ցաւ ոսկր առ ոսկր և յարեան և կացին
ժողովուրդ բազում յոյժ յոյժ: Եւ Ներսէս
հայրապետն ասէ. Գիբեղզմանք մարդկան բա-
ցուին, փտեալ մարմինքն նորոգին, և զոր
կեալ | թիբրես ըլլայ կրեալ կամ կերեալ |
ձկանց ծովին և զոր զազանքն ի ցամաքին:

« Եւ երբ այսպիսի յոյս և միխթարու-
թիւն կայ, որպիսի երթանք և տեսնուք
զմեր հայրն և զմայրն, զբոյրն և զեղբայրն
և զազգականքն և զղրացիսն, զսիրելիս և
զբարեկամս, ճանաչեմք զմիմեանս և զրու-
ցեմք հետ միմեանց, ասեմք և լսեմք: Եւ
հետ հրեշտակաց միածայնեալ արհնեմք
զովեմք և բարեբանեմք սուրբ զԵրբոր-
դութիւնն: »

« Եւ ի ծովն էք խեղդէք և ապրանքն
ի ծովն էք գնացեր նայ քիչ մի հոգալու-
էք. նայ Ախիւճան եղբայրս հիմի հետ ար-
դարոցն է, ի փառս և ի պատիւ, զի ինչ
որ ունէր՝ փոքր ի շատէ ի փոքրուստ ի
վեր մեղք և (յ)անցանք ամենն ըսպան-
նողին վիզն մնաց. և ապրանքն առնուողն
այլ պիտի վճարէ յար զատաստանին
ըստ այնմ թէ. էւ մազ մի ոչ կորիցէ ի
զլիոց ձիւրոց »:



ԱՅՏՈՒԾԱԲԱՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ

ՕՁՆԵՑԻՈՅ

ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՑ ԺԱՌԻՆ



Մնծ զէպրեբը մեծ մարդիկ կը շինեն:
Պատերազմը անուանի զօրավարներ կը
յարուցանէ. մոլորութիւնները մեծամեծ
հայրապետներ: Անշուշտ ո՛չ Աթմնաս մը,
ոչ Կիրեղ, ոչ Օղոստինոս մը պիտի ու-
նենայինք այնքան մեծ՝ և թէ անոնք ա-
պրած չըլլային կրօնական և աստուածա-
բանական հրատապ կոիւններու ժամանակ:

Նոյն այդ հակաճատութեանց պայքարը՝
տուաւ և Հայ Եկեղեցւոյ Օձնեցի մեծ հայ-
րապետ մը, ո՛չ ինչ ընդհատ ուղղափառ
հաւատոյ քաջ ախոյաններէ և մեծութեան
և հանճարի ամէն ձիրքերով օժտուողներէ:
Նուրբ և խորաթափանց միտք, քա-
ջահուտ՝ նախնի Ս. Հարց, հզօր աս-
տուածաբան, պայծառամիտ իմաստասէր,

այնպիսի նուրբ և կուռ փաստեր ունի՝ որ կարծես Յոյն Հարց ներուժեանց իսկու-
թիւնն է որ կը ցուցնէ իւր վարդապե-
տական գրուածոց մէջ, բառապարտութիւնը
զարգացած, բացատրութիւնները պարզ,
զիւրամատչելի քան արդի աստուածա-
բաններէն շատերունը, անաչառ, ուղղա-
սէր, հարուածող զրիչ: Ո՛չ միայն հմուտ
աստուածաբան՝ այլ և արթուն հովիւ,
կազմակերպող միտք եկեղեցական կար-
գադրութեանց. նա իւր դարուն առաջին
հայ հանձարն է, ճոխ՝ զիտութեամբ, ճոխ՝
կազմակերպութեամբ, ճոխ՝ ոսկեփայլ մո-
րուքով:

Իմաստասէր հայրապետս երեք աս-
տուածաբանական հակաճառութիւններ զը-
րած է, որոնց երկուքը «Բեդդեմ Երևաբա-
կանաց» և «Վասն Մարմնատրոսիան Բա-
հիս» բարձրաթիւիչ, զուտ աստուածաբա-
նական են:

«Վասն Մարմնատրոսութեանը» որ դեռ
նոր երևան ելած է կորստեան մութ քօղի
տակէն՝ շատ աւելի նուրբ և խոր է քան
միւսները, ուր իմաստասիրական որոշ և
համառօտ սահմաններով սուր զանազա-
նութիւններ, համոզիչ փաստեր ունի, և
կը զանուիս այնպիսի աստուածաբանական
զարգացած բացատրութիւններ՝ իբրև թէ
այս պարուս աստուածաբան մ'ըլլար նա,
և կարծես թէ մեծ Ալգոլինացւոյն քանի
մը հրաշալի էջերը կը կարդաս: Իսկ «Բնդ-
դեմ Երևութեանաց» ըրողովին աս-
տուածաբանական հանգամանք ունի. հոս
ալ թէպէտ բարձր աստուածաբանութիւնը
և խորութիւնը չի պակսիր, բայց աւելի
Մ. Գրոց և Ս. Հարց վկայութեանց և
աստուածաբանական յայտնի ճշմարտու-
թեանց, առանձնուրու ճարտար հիստուածքին,
պարզ բացատրութեանց մէջն է իսկական
էութիւնը: Բայց ունի նաև աստուածաբա-
նական իսկատիպ շատ գեղեցիկ գիւտեր:

Այս երկու ճառերէն մին բանական
զրուածք է, միւրը՝ աստուածաբանական:
Մէկ խօսքով երկուքը միասին կրնան
կազմել աստուածաբանութեան «Յաղագս
Բանին մարմնացելոյ» ճառին զասագիրք

մը, հոն այս ճառիս վերաբերեալ ամէն
մաս շօշափած ըլլալուն համար:

Երկու ճառերն ալ, որոնց խնդիրը հար-
կու ժողովրդեան դիւրամատչելի ըլլալուն
համար (քանի որ Քրիստոսի երկուց բը-
նութեանց գծուարին խնդրոյն վրայ են)
բողոքովին տեսական աստուածաբանու-
թեան ասպարիզին մէջ կը ֆնան:

Իսկ երբորդ ճառը «Բեդդեմ Պտաղի-
կոսեց» ը աւելի ժողովրդական աստուա-
ծաբանական գրութեան մը բնոյթն ունի,
նիւթին աւելի ժողովրդական ըլլալուն
համար:

Հոն գիտնականօրէն կը հերքէ սրբոց
պատկերաց յարգութեան կռապաշտութիւն
համարիլը և կը ցուցնէ այն անհուն անար-
բերութիւնը՝ որ կայ կուռքերու և քրիս-
տոնեայ պաշտամանց առարկայից և դիտ-
մանց մէջ: Ճշտաւ աւելի ժողովրդեան համար
զրած է ուղղակի, զգուշացնելու համար
մուտքով Մարմնագոմեցիներէն, որոնք «որո-
« զայթ իբրև զվարձ հաւորաց ձգեալ ի
« մէջ ժողովրդեան ազգի իւրոյ ըմբռնել
« զախմարս և զպարզամիտս ի մարդկանէ ».
որոնք եկեղեցին վերանորոգելու պա-
տուակով « չարեաց ի չարիս վերացեալ
« ելին, ի պատկերամարտութիւնէ ի իսա-
« չամարտութիւն, և ի քրիստոսասեպու-
« թիւն, և անտուս յանաստուածութիւն
« և դուսպաշտութիւն »:

Այս ճառիս մէջ Օձնեցին շատ բազմա-
կողմանի գիտութիւն կը ցուցնէ՝ մանա-
ւանդ հեթանոսական շատ ազգերու պաշ-
տամանց մասին:

Յետ այս թիւիչով ընդհանուր տեսու-
թեանց՝ դառնանք բուն մեր նպատակին:
Երևութեանաց դէմ ճառը երեք որոշ
մասերու կրնանք բաժնել.

Ա. — Համառօտ Նախարան մը. 48-49
էջ. (տպ. ի Վենետիկ. 1833).

Բ. — Պաշտպանութիւն երկուց բնու-
թեանց ի Քրիստոս. 49-66.

Գ. — Հերքումն Քրիստոսի երևութեան
մարմնատրոսութեան. 66-80.

Առաջին մասը թերևս աւելի յարմար էր
« Վասն Մարմնատրոսեան » ճառին, բայց

որովհետև Քրիստոսի երկու բնութենէն ներքապէս, անմիջապէս կախուած է և կապ ունի նաև իրական շօշափելի մարմին ունենալը և միանգամայն Աստուած ըլլալը, անոր համար նախ երկու բնութիւնը կը պաշտպանէ և ապա կ'անցնի բուն երևութականութեան: Անշուշտ մտորեալները այս դրութեամբ կը մերժէին եկեղեցւոյ վարդապետութիւնները. քակէ՛ հիմը, շէնքն ինքնին կը փլչի:

Ս. Հայրապետը իր աստուածային ճշմարտութեանց նախանձով՝ կը սկսի իւր հակաճառութիւնը. « Յանուն նորա (Քրիստոսի) խրախոյս բանամբ, յաղագս և նորին անաւասիկ և ստեամբ զատելիս և նորա. զկատարելագոյնն գնտին ստեալս և ցուր զասելութիւն »:

Աղանդաւոր Մայրագոմեցիք առիթ առնելով զարուն կրօնական շփոթութիւնն ի Հայաստան՝ փաղկեղոնի ժողովոյն նկատմամբ, երկու բնութիւն չըսելու պատրուակով « Զի մի՛ երկուց, ասեն, ակնարկու և թիւն տայցեմք քնութեանց ի մին Քրիստոս »: և հետևաբար այնքան « ներքն և և նուաղեցուցանին որ վասն Քրիստոսի և մարմնոյն մտածութիւնք և ճառք մինչ « զի առ աչս երևութեան կարծիս արկաւ և նել մարմնացելոյ թանին »:

Ահաւասիկ ներկայ ճառիս բուն էական խնդիրը, թշնամիները կը ժխտէին Քրիստոսի երկու բնութիւնը, որպէս զի քօզարկեն անով իրենց մոլորութիւնը և ժխտեն իրական մարդկային շարչարելի մարմին: Իսկ Ս. Հայրապետը կը հերքէ զօրեղ փաստերով անոնց թիւր կարծիքները, մանաւանդ հերետիկոսութիւնները, հաստատելով թէ Քրիստոս երկու բնութիւն ունի, որովհետև կատարեալ Աստուած էր և կատարեալ մարդ, և եթէ կատարեալ մարդ, ուրեմն ունէր ներթական, շօշափելի, շարչարելի մարմին, որպէս բնդհանրական Եկեղեցին կը խոստովանի: Եւ այս ճշմարտութիւնները կը կը հաստատէ Ս. Գրոց անհերքելի աստուածատուր փաստերով և Ս. Հարց անթիւ վկայութիւններով:

Սովորութիւն է հերետիկոսներուն իրենց մոլորութիւնները քանի մը աղաւաղեալ, խանգարեալ Ս. Գրոց վկայութեանց կամ երկմիտ բացատրութիւններու տակ ծածկել, և բառերու իմաստակ առումներու վրայ յենուլ: և ահա ճիշդ այս կերպարանքն ունին Մայրագոմեցւոյ վարդապետութիւններն Օմեհցւոյ մէջըրումներուն մէջ:

Քրիստոսի տնօրէնութեանց սկիզբէն է որ կը սկսին կերպով մը. Մայրագոմեցին շարամիտ նրբութեամբ կը մերժէ Մարմնացաւ ի կուսէն բացատրութիւնը, զնեղով ի կուսին երկդմիտ բացատրութիւնը, հասկնալով թէ Քրիստոս անցաւ ի կուսէն առանց բան մ'առնելու անկէ, ինչպէս Չուրը խողովակէն. և հետևաբար մարդկային իրական մարմին մը չառաւ: Մինչ ի կուսէն ձեւը աւելի որոշ է և համեմատ Ս. Գրոց. որով Յիսուս առաւ ի Ս. կուսէն այն՝ ինչ որ այլ որդիք իրենց մօրէն կ'առնուն:

Յետ այս հիմը դնելու թէ զգեցաւ մարմին շօշափելի թ Ս. կուսէն, այն է մարդ կատարեալ եղաւ բնութեամբ, հիւանալի և միանգամայն պարզ աստուածաբանութեամբ կը մեկնէ զանազան կերպերով թէ ինչ է երկու բնութիւն ըսելը. « Զի ոչ « է մի բնութիւն մարմնոյն և թանին ըստ « նոյնութեան բնութեան... անեղ, յանեւ « զագունէն եղեալ ի Հօրէ, մարմին ստաւ « ցաղան յարգանդէ կուսին զգեցաւ, ապա « ուրեմն ոչ է ըստ բնութեան նոյնութեան « մի բնութեան »:

Այս այլևու պէս պայծառ մեկնութիւններէն կ'անցնի Ս. Կիրիլի Մի է բնութիւն թանին մարմնացելոյ հռչակաւոր բանաձևին, որ ի հինս շատ զլուխներ տաքցուցել է, քար զայթակղութեան ըլլալով տգէտ պարզամիտներուն և զէն շարութեան խաբեբայ մոլորիչոց:

Ս. Յովհանն իւր սուր և ճշմարտաւէր մտքով Յովհաննց անց այս բանաձևին իրրե պաշտպան և թարգման մեր նախին Հարց ուղղամիտ ըմբռնման՝ կ'իմացնէ իւր հակառակորդաց թէ մենք այս բանաձևը « իսկ լայիղ և ջախջախ մտածութեամբ » չենք

ըսեր, այլ իւր հեղինակին ուղիղ իմաստով: Այս բանաձևով Ս. Կիրեղ զՆեստոր կը նզովէր որ երկու բնութիւն (φύσις) կը դաւանէր ի Քրիստոս, բնութիւն՝ իմանալով ինքնին դիմաոր անձնաւորութիւն և հետևաբար այլ ոմն ուրոյն մարդ, այլ ոմն ուրոյն Աստուած, և Բանն Աստուծոյ այդ Յիսուս մարդուն մէջ իբր ի տաճարի կը բնակէր, կամ իբրև զգետ վրան առած էր, և Ս. Կուսամայրը Քրիստոսածին կը կոչէր, ոչ Աստուածածին:

Հակառակ այս այլանդակ մոլորութեան Ս. Կիրեղի դրա «Մի է բնութիւն (անձն «իմանալով ինչպէս Նեստոր) Բանն մարդ «մնացելոյ» հաստատելով իրական, նրութեան, բնական միութիւնը Աստուածամարդոյն, այս մէկ անհար, Աստուածամարդը, և ոչ այս Աստուածը, և այս մարդը առանձին:

Սոյն իմաստով է որ ընդգրկելու է Հայ Եկեղեցին այն բանաձևը. այս էր Ս. Կիրեղի միտքը, այսպէս հասկցեր է Ս. Օձնեցին. «Ոչ որպէս թէ միոյն ի միւսմէն ի բաց «բարձեալ և կամ լուծեալը ի միմեանց «... այլ զոր էրն ոչ ի բաց թողով, «եղև՝ զոր ոչն էր» . այս է և արդի կաթողիկէ աստուածաբանից լեզուն. այսպէս հասկցած են Նարեկացին, զոյգ Ներսէսները, և անոր համար Հայերը զՅոյնները իբրև Նեստորական կ'ամբաստանէին:

Օձնեցին ի հաստատութիւն իւր ուղիղ մտաց շատ վկայութիւններ կը շարէ Ս. Կիրեղին, որուն հեղինակութեամբ շարամիտ մոլորեալները կը զեղծանէին: Նոյն այս պայքարն է որ կը տեսէ և յաջորդ էջերուն մէջ. Մայրազոմեցիք մէկ մոլորութիւն չունէին, ամէն հերետիկոս հոն կ'երևնայ, և Օձնեցին շատ լաւ կը ցուցադրէ այդ ըողարկուած մոլորութիւններն ու հեղինակները. «Քոյ հնար, կ'ըսէ, «Թուել զխինս հնդեղասի, և զաւագ ծո. «վու և զշիթս անձրևի և ոչ զստեղծեալն «առ ի քէն նորագիտ բանս և իրս» կը գրէ առ Սարգիս Մայրազոմեցին՝ կոչելով «խանգարիչ տանս Հայոց»:

Մոլորեալները մի բնութիւն ըսելու

մղձաւանջէն բռնուած, ան ալ հերետիկոս մտքով «Որ Մանրեցեացն հայի աղհատանն» մերթեցին թէ մարդս բնութիւն ունենայ «Ոչ ասի այլ բնութիւն, բայց «արարչական և եկէ և ամենայնք ի նմա. «նէ ամանցոցեալը՝ զնա ունին միայն «իւրեանց բնութիւն», որ պարզապէս կամ անաստուածութիւն է կամ բազմաստուածութիւն, և երկուքն ալ անաստուածութիւն:

Բայց որովհետև կ'ընդունէին թէ Քրիստոս մարմին առաւ, բայց ոչ բնութիւն մարդկային. «Իսկ զմարմին՝ մարմին Քրիստոսի ասեմ և ոչ բնութիւն», այլ աստուածային բնութիւնն եղաւ մարդկային բնութիւն. անըմբռնելի յիմարութիւն... որուն պարզ և կուռ պատասխան մը կուտայ դառնացած հայրապետը. «Փախչիս «ի բնութեանը անուանէ, ընդ նմին և «յերկուց ասելոյ, և ոչ զիտես թէ մարդ. «մին առելով՝ յերկուսին ի ներքս ըմբռնիս «յորոց փախչիաղ... զԲանն ի Հօրէ ասե. «լով զՀօրն տացես նմա զբնութիւն, իսկ «զմարմինն ի մարդկանէ ասելով՝ զՊր «ունել ասես նմա բնութիւն եկէ ոչ «զմարդկանս. որ երկուսն ասէ բնութիւնս, «զաստուածայինն և զմարդկայինն ասէ, «զու զՊ՝ որ է նոցանէ ասես զմիւր «սեւով»: Մոլորեալները սակայն աւելի մարմինը կ'ուզէին ժխտել, այն է իրական մարդկութիւնը քան լոկ երկու բնութիւնը. «Բայց կարծեմ թէ կամիք և ոչ մարմին «Քրիստոսի ասել»:

Յետ զթշնամին իւր սուրով խոցոտելու, կորովաբան լեզուով և ժողովոց վկայութեամբ ըմբռնելու թշնամեաց «այլանութեան և հայհոյիչ շարարութեամբ» լեզուն, քանի մը տողով բուն եկեղեցոյ վարդապետութիւնը կը բացատրէ. «Բանն «Աստուած զոյութիւն (մարդկային մարդ «միոյն) հանդերձ մարդկային բնութեամբ «ընկալեալ յանարատ արգանդէ կուսին՝ «ընդ ինքեան միաւորեաց անճառապէս «զոյութեան և բնութեան (անձին)»:

Յայտնի է թէ բնութիւն բարո իւր երկմիտ իմաստով շատ անտեղութեանց

պատճառ եղած է, ղեկ աստուածարանական լեզուն այնչափ զարգացած չըլլալով թէ (φύσις = natura) և թէ (υποστασις = persona) նշանակելով թէ՛ Յունաց և թէ՛ Հայոց բով ի հուսն: Եւ այս անտեղութիւնն անդրադարձած էր նաև խորիմաստ Հայրապետը, և կը ծանուցանէ թէ «Երբ» «կրիչ մեծ գոյ իթէ ոչ արժանապէս զմին» «ասել ֆրիստոսի բնութիւն... որպէս Ս. «Հարցն բարեփառութեան հիմնացեալ «հաւատով»: որոնք միշտ այս անորոշ բաներուն ըով բացատրութիւն կը դնէին, այսպէս երկուս և մի բանաձևի գեղեցիկ յարմարութեամբ պաշտպանեցին Նեստորի դէմ մի բնութիւն ըսելով, որ անձի իմաստով ասած՝ ուրոյն երկու որդի կը դնէր Աստուծոյ և Տիրամօր: Նոյնը գործածեցին և Եւտիքէսի բարբաճման դէմ զանազանելով աստուածային և մարդկային բնութիւնները երկու բնութիւն ըսելով. հոս բառին այժմեան իսկական նշանակութիւնը գործածելով:

Յետ այս գեղեցիկ աստուածաբանութեան, յետ կտրելու մուրուրութեան արմատները, ցուցադրելու ճշմարտութիւնը, կ'ողբայ ցառնացած սրտով հասած աղէտը, հոգնհիւրու կորուստը, և արիւնտ սրտով կը զոչէ. «Ո՛ր տարցուք զառ ի քէն» «հասեալ աղէտս, ո՛ւմ պատմեցուք ըզ» «չարիս, կամ ո՛ւմ գոյժ տացուք զան» «Նատելոյ ի կաթանէ, զհատուցելոյ ի «ստեղէ»: Կը յորդորէ հայրենի սիրով թողու իւր բմածին ցնորբանութիւնները, զարձի գալ, մտնել ոչխարաց գաւթի՛ր, հաւատալ աւելի Ս. Գրոց քան իւր կամաց: Այս յորդորներով կը փակէ երկուց բնութեանց խնդիրը, համառոտակի քննելու բուն իւր նպատակը, այն է երեւութականութիւնը՝ որ հետևանք է երկու բնութեան խնդրոյն:

Սովորութիւն է և կատար չարութեան մուրեղնոց՝ խեղաթիւրել լրբութեամբ թէ՛ Ս. Գիրքն և թէ՛ Ս. Հարց Ճառերը: Եւ ահա այդ հասարակաց ախտով վարակուած էին և Մայրագոմեցիները՝ ինչպէս կը տեսնուի: Մասնաւորապէս մեր Ս.

Հարց գրութիւններն էին որ խաթարեք էին ուր որ ֆրիստոսի տնօրինական կրիչ վրայ խօսք կար: Օձնեցոյն սասար հոս ևս կը հարուածէ այդ յանդուգն լիբրերը, մանաւանդ որ դա մի նենգաւոր միջոց էր մուրուրութեանց վարակման. « ի ձեզ հըն» «չեաց բանն Աստուծոյ և առ ձեզ միայն» «հնառ աւետարանն, զո՞րք ուրեմն հովիւք» «քաջը»: միթէ Լուսաւորչները, Սահակները, Մեսրոպյանները, տիեզերական Մովսէսները որ ասոնք գրեցին «գո՞ղք էին և աւազակք»:

Ս. Հայրապետը թէ՛ վասն Մարմաւորութեան Բանին ճառին մէջ և թէ հոս կը խօսի ֆրիստոսի կրից և անապականութեան վրայ, առաջնոյն մէջ շատ համառօտ և միայն զֆրիստոս ի զերեզմանի կը նկատէ. իսկ հոս շատ երկար և վարդապետական ոճով, Օձնեցին այս մասին մէջ շատ մանր խնդիրներու կ'իջնէ և կը լուծէ, բան մը որ շատ զծուար է զանել ուրիշ Ս. Հարց բով այսպիսի մանրախոյզ գրութիւն. զա սուր մտքի արդիւնք է:

Մայրագոմեցիք մերժելով ֆրիստոսի մարդկային բնութիւնը ինչպէս տեսանք, կը մերժէին նաև չարչարելի ըլլալը կամ կրքեր ունենալը: Իրենք ևս, նախիբ մը հին հերեօտիկոսներու հետ մեղք կը համարէին մարդուս բնութեան ո՛ր և իցէ տկարութիւն, և հետևաբար ֆրիստոս, որ ի մեղաց ազատ էր, չէր կրնար ունենալ այդ կրքերը:

Բայց իմաստասէր Հայրապետը շատ հակիրճ և կտրուկ պատասխան մը կուտայ՝ պարզ անոնց խառնիխուռն դրած առարկութիւնները զանազանելով. «Ոմանք «ի կրիցն բնականք ասին, որպէս քաղցն» «և ծարաւ և քունն և հոգ և երկիւղ և «տգիտութիւն՝ են.» «Իսկ ոմանք յե-

1. Հայրապետս ալ նոյնպէս կը համարէ որ ֆրիստոս իբրև մարդ կ'անդիսանար բաներ մը, ինչպէս վերջին գառատասնին օրը. են. Թերևս ազգուած է այն՝ ոչ ուղիք՝ այլ պարագայական պատասխանէն, զոր Ս. Հարց Ազգիւնարի կու տային՝ ի ֆրիստոս բանաւոր մեղք

« տամտականք ի մեզ եղին, որպէս մեղք, « և մահ՝ պատուհաս արարչէն»:

Բնականքն Աղամ ևս ունէր, կ'ըսէ, և կը շարէ շատ ապացոյցներ, իսկ Աղամայ անմահութիւնը շնորհք էր և ոչ պահանջ բնութեան, բայց այս խնդրոյս մասին Հայրապետ տարբեր լուծում կու տայ:

Յետ այս պատասխանին « զքնչ զար- « մանք են թէ և Փրկիչն սրբօք ի կեն- « ցաղավարին ընդ մարդկան վարեցաւ, « ուրանօր և կամեցաւ, և յորժամ և որ- « քան » . այս խօսքերով և ուրիշ վկա- յութեամբ ևս կը հաստատէ թէ Քրիստոս ձգատ իշխանութիւն ունէր իւր կրից վրայ. « Բանն Աստուծոյ ինքնիշխան կամօք... « յորժամ կամէր ինքն յայնժամ ակնար- « կէր մարմնոյն իւրոյ յառաջ ունել զբը- « նականն » . և ապա զեղեցիկ վկայու- թեանք վճռական խօսքերով կը հաստատէ կաթողիկէ ճշմարտութիւնը:

« Ճշմարտութիւն էր և երևումն, ճշմար- « տութիւն էր և երեւանն. ճշմարտութիւն « էր և կրելն, ճշմարտութիւն էին կիրքն »: Գեղեցիկ ոսկեղէն խօսքեր, կնիք հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան:

Ճառիս այս երկրորդ մասին մէջ Օձնե- ցին իմաստասիրական խնդիրներ ևս կը շորչափէ հոգւոյն և զզայարանաց վրայ տալով որոշ զանազանութիւններ. ունի ճոխ բառամթերք մը, թէպէտ քիչ մը հեղինարան:

Որոշ և վճռական փաստեր ունի նաև Քրիստոսի տնօրինականաց զեռ անորոշ մասերու վրայ ևս: Մասնաւոր քննութիւն- ներ կը կատարէ անապական և ապականացու կարեաց վրայ, մանաւանդ ի մե- ղաց առաջ եկած կրից վրայ, և անուղ- ղակի շահեկան տեղեկութիւններ կու տայ Աղամայ անկման վարդապետութեան վրայ: Օձնեցին թէպէտ մեծ ազգեցութիւն կրած

է նախնի Յոյն և Հայ Հայրերէն, բայց նա ազատ մեկնիչ մ'է անոնց. սուր և գիւտաւոր հետեանքներ հանող անոնց ընդ- հանուր խօսքերէն. ունի յստակ կուռ և պարզ ապացոյցներ, և առատ արբիւր է աստուածաբանական շատ սահմաններու և վկայութեանց. մէկ խօսքով Յոյն Ս. Հարց բունին վրայ պատուաստուած հայ զօրեղ բարունակ մ'է:

Ս. Հայրապետ, իբր վերջարան իւր ճառին, կը հրաւիրէ զՔրիստոս ինքն՝ որ մեզ ուսուցանէ. « Եւ զայս բանից արժատս ինքն իսկ եկեալ ուսուցէ մեզ Տէր », զե- ղեցիկ ամփոփում մ'ընելով Քրիստոսի բեր- նով այս վերջի մասին, և հրաւէր կար- դալով իւր մոլորեալ որդւոց՝ լսել Քրիս- տոսի ձայնին՝ քան իրենց երեակայու- թեանց:

Հուսկ առ Քրիստոս համատու մաղ- թանքով մը մը փակէ, որպէս զի « Ճառ « խաչի քո (Քրիստոս) ժողովեսցէ լինել « ժառանգորդ Արքայութեան քում »:

ԵՂ. Վ. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ



ԳԱՍՏԻԱՐԱԿԵԼ՝ ընդհանուր առմամբ՝ կը նշանակէ ի գործ դնել մարդու բարձրա- գոյն եւ ազնուական մասին վրայ՝ իր կենաց առջի տարիներուն պաշտօն մը, Տիշդ ինչպէս դայեակը կամ մայրը կը կատարէ անոր կազմուածքին վրայ, երբ սա դեռ թարմ է եւ աճելու ճամբու մէջ կը գտնուի: Կը նշանակէ ի գործ դնել զայն այնպէս՝ ինչպէս որ մայրը կամ դայեակը եւնթա- դրելով մանկան մէջ մարդկային մարմնոյն բոլոր գործարանները ամբողջ եւ առողջ՝ ուրիշ բան չ'ընել եթէ ոչ արծարծել անոնց մէջ յաւաչախաղաց ու կանանաւոր աճում մը, մինչեւ որ հասնի այրական կազմու- թեան:

որով և հոգի պաշտպանելով՝ իբր ազացոյց առած Ա- ւետարանի այն խօսքը թէ « Եւ ոչ Որդի բայց միայն Հայր » . զոր ոչ թէ չէր գիտեր, այլ լուսնէր պատուէր ի Հօրէ՝ զայն մեզ յայտնելու: